

իր ղեկավարությունը հայտնեց, որ պրոֆեսոր Ղափանյանը ուսուցիչ է դեկուպի Նախ՝ այս պերջին հարցերը պիտուսխայում քննարկման առարկա չէին, քանի որ մեզ մոտ յուրաքանչյուրին թույլատրվում է և երաշխավորվում ուսուցիչն խոսելը: Երկրորդ՝ եթե ըստ էության մասնանաք, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ ազդեցին նեղ սամանափակվածություն առատահայտություն, որը ղեկավարությամբ մեր մի շարք լեզվաբանների մոտ կա և որը հնարավորություն է տալիս մարքսիստական մեկնաբանությունում բազմակողմանիորեն ուսումնասիրելու թեկուզ և նեղ մասնադրական հարցերը: Իմ կարծիքով մեր մի շարք լեզվաբանների այդ սխալ տեսակետը արժանի է խիստ քննադատության: Դուրս է. Ազատյանը առհասարակ այդ կարծիքին չէ, եթե այդ ազդեց է, լավ է. բայց նրա հետ չթը ազդեցիկ տղավորություն թույլեց: Երա կուլթը դեռ չէր ազատազրկված մասիստական հայացքներ պարունակող մաքերից, որոնք նա պարտավոր է սուր քննադատություն ենթարկելու:

Պետք է հուշար, որ ներկա սեսիայից հետո մեր լեզվաբանները պարտական աշխատողները, մամուլի, ժողովրդական կրթություն, ղրականություն և արվեստի աշխատողները լեզվաբանություն վերաբերյալ բնկեր Ստալինի հանձարեղ աշխատությունների լույսի տակ հուանդուն աշխատանք կկատարեն զարգացնելու մեր մայրենի լեզուն, համառորեն կուսումնասիրեն ուսու մեծ ժողովրդի լեզուն:

ՂԵՆԿ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Արդի հայերենի կազմավորման հարցի մասին եղել են և այժմ էլ շարունակում են գոյություն ունենալ իրարամերժ կարծիքներ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի:

Ոմանք կարծում են, թե ժամանակակից հայոց լեզուն գրարարի անմիջական շարունակություն է, գրարարի զարգացման հետագա փուլը, թե գրարարը չբայցայվից, հմադադավ, այլ զարգացավ և տվեց այժմյան հայոց լեզուն: Այս տեսակետը իմ կարծիքով սխալ է:

Հայանի է, որ ժամանակակից հայոց լեզվի հենց թեկուզ քերականական կառուցվածքը խիստ տարբերվում է գրարարի քերականությունից, զրանք նույնիսկ իրարից տարբերվում են իրենց սխալմով, գրարարը հիմնականում թեքական, իսկ արդի ղրական լեզուն կցական սխալմ ունի: Ոչ ձևաբանությունում բ (հարվում, լսնարհում), ոչ էլ շարահյուսությունում (իսկ այս երկուսը, ինչպես ցույց է տվել բնկեր Ստալինը, կազմում են լեզվի քերականությունը) այդ երկու լեզուները ոչ թե չեն նույնանում, այլև խիստ տարբերվում են:

Երբեմն մատնացույց են անում բառային կազմը կամ տվելի ճիշտ՝ բառային հիմնական ֆոնդը, թե անա, մեր բառերի մեծ մասը գրարարյան է: Ես կարծում եմ այստեղ էլ մեկ ուրիշ սխալ մոտեցում կա: Գրարարյան որ բառերն են մեր այժմյան լեզվի մեջ գործածվում. մեծ մասամբ այն բառերը, որոնք կան նաև մեր բարբառների մեջ, իհարկե, առաջին հերթին՝ Արարատյան բարբառում: Միանգամայն սխալ է, երբ հաց, ջուր, ծառ, գետ և հաղարավոր նման բառեր անմիջապես բխեցնում են գրարարից, թեև դրանք նույնությունում կան հենց Արարատյան բար-

բառում: Գրարարի և մեր բոլոր բարբառների բառային հիմնական ֆոնդը ընդհանուր առմամբ նույնն է: Հենց դրա համար էլ դրանք նույն հալ ժողովրդի լեզուն ու բարբառներն են: Մեր այժմյան լեզվի բառային հիմնական ֆոնդը նույնքան դրարարյան, սրբան և բարբառային է: Ձի կարելի մոռանալ, որ այսպես կոչված տիպիկ դրարարյան բառերի չափազանց աննշան մասն է մտել արդի հայերենի մեջ:

Այսպիսով, մեր լեզվի բառային կազմը և մանավանդ քերականական կառուցվածքը տարբերվում են դրարարից, ուստի արդի հայոց լեզուն չի կարելի համարել դրարարի անմիջական շարունակությունը:

Երկրորդ կարծիքն այն է, որ ժամանակակից հայոց գրական լեզվի հիմքը «Ում» ճյուղին պատկանող բարբառներն են: Այս նույնպես ճիշտ չէ:

Ճիշտ է՝ «Ում» ճյուղին պատկանող բարբառների մեջ կան սրոշ ընդհանրություններ, և հենց այս ընդհանրություններով էլ մեր այդ ճյուղի բարբառները կապվում են արդի լեզվի հետ: Գարծել թե «Ում» ճյուղին պատկանող բոլոր բարբառներն էլ հավասար մասնակցություն են ունեցել արդի հայերենի կազմավորմանը, թե մեր լեզվի քերականական կառուցվածքը (և բառային ֆոնդը) այդ բարբառների քերականական կառուցվածքի դուրսն է, սինթեզը՝ խիստ սխալ է: «Ում» ճյուղին են պատկանում նաև Աղուլիսի և Ղարաբաղի բարբառները, բայց հաղիվ թե լինի մեկը, որ ցույց տա դրանցից մեր լեզվին անցած քերականական և բառային ձևեր (և այստեղ նկատի չունենում ընդհանրությունները): Ուրեմն, մեր լեզվի քերականական կառուցվածքը և բառային կազմը չի կարելի համարել «Ում» ճյուղին պատկանող բոլոր բարբառների գումարը:

Երրորդ, ոչ պակաս սխալ կարծիքն այն է, որ մեր լեզուն համարում են այդ երկուսի (դրարարի և «Ում» ճյուղին պատկանող բարբառների) սինթեզը, միայն խոսքերով ասած՝ խաչավորումով ստեղծված լեզու:

Ժամանակակից հայոց լեզվի կազմավորումը, նրա կառուցվածքը ճիշտ ըմբռնելու և բացատրելու համար պետք է, ինչպես մեզ սովորեցնում է ընկեր Ստալինը, հաշվի առնել մեր ժողովրդի պատմությունը, մեր լեզվի կազմավորման ուսույթը, և մեր լեզվի պատմության այս կամ այն հարցը լուծելիս, կապել այն ժողովրդի պատմության հետ:

Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ տեղական (տեքստորիալ) բարբառներն ունեն իրենց քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը և ընդունակ են ազգերի գոյացման պրոցեսում ազգային ինքնուրույն լեզուների հիմք հանդիսանալ և դարդանալ ու դառնալ ազգային ինքնուրույն լեզուներ:

Ընկեր Ստալինը ազգային լեզվի գոյացման պրոցես է համարում այն, «... երբ զարգացման անհրաժեշտ տնտեսական պայմանների բացակայության հետևանքով, գեոևս ազգ չդարձած ժողովրդի (народность) միասնական լեզուն, այդ ժողովրդի պետական քայքայման հետևանքով կրախի է մատնվում, իսկ տեղական բարբառները, որոնք գեոևս չեն կարողացել միաձուլվել միասնական լեզվի մեջ, — վերակենդանանում են և սկիզբ դնում առանձին ինքնուրույն լեզուների գոյացմանը»:

1 Ի. Ս ա ա լ ի ն, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951 թ. էջ 103:

Հենց այսպես էլ կազմավորվել է հայ ազգային զրական լեզուն. Իր ելույթում պրոֆ. է. Աղայանը առարկեց զրա զեմ, որը իմ կարծիքով, ճիշտ չէ՝ Պրոֆ. Ղափանցյանը շատ ճիշտ է զրել այդ հարցը, և ես լիովին պաշտպանում եմ այդ դրույթը։

Պրոֆ. է. Աղայանի պատճառարանությունն այն է, որ հայ պետականության անկումը ժամանակի տեսակետից զրաբարի կրախին չի զուգադիպում։ Հասկանալի է, որ չէր էլ կարող զուգադիպել։ Միթե ոյարզ չէ, որ եթե պետական անկումը կատարվում է արագ, կարճ ժամանակում, լեզուն չի կարող անմիջապես նրա հետ կրախի մասնվել։ Ընկեր Ստալինը շատ հիանալի կերպով ցույց է տվել, որ լեզվի քայքայումը տեղի է ունենում դանդաղ, երկարատև ժամանակաընթացքում։

Հայկական պետականության անկումը այն հիմնական ազգակն էր, որ սկիզբ դնց զրարարի քայքայմանը։

Գրարարի մահացումը, որ տեղի է ունենում ոչ կարճ ժամանակաընթացքում, հնարավորություն է տալիս մեր ամենազարգացած բարբառներից մեկին՝ Արարատյան բարբառին, որը մյուս բարբառների նման զեռ ևս չէր ձուլվել համընդհանուր զրական լեզվի, այսինքն՝ զրարարի մեջ, վերականգնանալ և սկիզբ զնել ազգային լեզվի գոյացմանը։ Հենց միայն այսպես պետք է բացատրել մեր լեզվի կազմավորումը, ժամանակակից հայոց լեզվի հիմքը Արարատյան բարբառն է, նրա քերականական կառուցվածքի և բառային կազմի հիմքը Արարատյան բարբառինն է, որովհետև նա իր և՛ հնչյունական կազմով, և՛ ձևարանությունամբ, և շարահյուսությունամբ շատ ավելի նման է Արարատյան բարբառին, քան զրաբարին, կամ որևէ այլ բարբառի։ Այս մասին նույնիսկ չի էլ կարելի վիճել։ Եթե վիճողները զոնե մեկ անգամ փորձեն իրար հետ համեմատելու արդի զրական լեզվի և Արարատյան բարբառի լեզվական-քերականական իրողությունները, ևս համոզված եմ, որ նրանք երկրորդ անգամ այդպիսի հայտարարությունամբ հանգես զալ չեն կարող։

Պաշատուր Արույանի լեզուն մեր այսօրվա զրական լեզվի, եթե կարելի է այսպես ասել, նախատիպն է, իսկ այդ լեզուն վստահ կերպով կարելի է պնդել, որ շատ ավելի մոտ է Արարատյան բարբառին (իհարկե, նա չի նույնանում Արարատյան բարբառի հետ, ինչպես կարծում են ոմանք), քան զրարարին կամ որևէ այլ բարբառի։

Սակայն մեր լեզուն յուր կազմավորման, ձևավորման ու մշակման շրջանում կարող էր օգտագործել և օգտագործեց թե գրաբարյան և թե այլ բարբառների (հատկապես Բբիլիսիի) լեզվական որոշ տարրեր։ Այստեղ իրապես տեղի է ունենում ոչ թե համազրություն կամ իրաչափում, այլ միայն լեզվական որոշ տարրերի օգտագործում։

Այժմ մի երկու խոսք արեելահայ լեզվի և այսպես կոչված արեմտահայ լեզվի հարցի մասին։

Հայտնի է, որ արեմտահայերենը առանձին լեզու է դիտվել բավական երկար ժամանակ։ Միայն վերջերս վերանայվեց այդ հարցը և իմ կարծիքով՝ տեղին ու ճիշտ։ Արեմտահայերենը առանձին լեզու դիտելը զարձել է տրագիցիա և այսօր, երբ փորձ է արվում այդ սխալ տրագիցիային վերջ տալու, առաջին հայացքից և՛ տալօրինակ է թվում, և՛ անհամոզիչ։

Ես պաշտպանում եմ այն տեսակետը, որ արևմտահայերենը լեզու չի կարելի համարել, որ նա իրապես նույն Պոլսի բարբառն է։

Սովորաբար ընկերները բերում են այն փաստարկը, թե արևմտահայերենը շատ ու շատ է տարբերվում Պոլսի բարբառից և ավելի շատ. քան արևելահայերենը Արարատյան բարբառից։

Ես ուզում եմ խոսել հենց այս մասին և ցույց տալ, որ դա ճիշտ չէ, ասված է հապճեպ, առանց կոնկրետ համեմատություն կատարելու։ Ես բավական երկար դրադվեցի այդ հարցով։ Այժմ, իհարկե, ժամանակը չի ներում այդ մեկնի մասին մանրամասնորեն խոսել, բայց ուզում եմ դոնե մի քանի փաստեր բերել, ցույց տալու համար, որ տարբերությունը երկուսի միջև աննշան է։ Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ քերականության մեջ մտնում են ձևավորությունը և շարանյութությունը, Այժմ համեմատենք այդ երկուսի քերականական իրողությունները։

Հոլովումը արևմտահայերենում և Պոլսի բարբառում նույնն է։ Այստեղյանը հիշում է, որ արևմտահայերենում հոլովումը չորս տեսակ է՝ ի, ու, լվան, եան — ան։¹

Այս հոլովումները բառացիորեն նույնանում են Պոլսի բարբառի հոլովումների հետ։ Այժմ վերցնենք կոնկրետ բառերի հոլովումը արևմտահայերենում և Պոլսի բարբառում։

Արևմտահայերենում՝	Պոլսի բարբառում՝
Ուղղ. ծառ	հաց
Սեռ. ծառի	հացի
Չր. ծառի	հացի
Հայց. ծառ	հաց
Բաց. ծառէ	հացէ
Գործ. ծառով ²	հացով ³

Ճառացիորեն նույնանում է այս և մյուս հոլովումների պատկանող բառերի հոլովումը։ Այստեղյանի «Քննական քերականություն» և պրոֆ. Աճառյանի «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատությունների մեջ։

Հոլովների թիվը նույնպես նույնանում է երկուսի մեջ. թե արևմտահայերենը և թե Պոլսի բարբառը չունեն ներգոյական հոլով, երկուսն էլ ունեն միայն 6 հոլով։

Նույն ձևով են հոլովվում նաև դերանունները։ Բերենք միայն մեկ օրինակ։

Արևմտահայերենում՝	Պոլսի բարբառում՝
Ուղղ. Ես	էս
Սեռ. իմ (իմին)	իմ, իմին
Տր. ինձի, ինծի	ինձի, ընձի
Հայց. զիս (ինծի, իս)	իս, ինձի, ընձի
Բաց. իզմէ, ինէ	իզմէ, իսմէ, ինէ
Գործ. իզմով ⁴	իզմով ⁵

¹ Տե՛ս՝ Ա. Այստեղյան, «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի», 1888, էջ 6։

² Նույն տեղում, էջ 7։

³ Պրոֆ. Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Տե՛ս՝ Վ. Մ. Մուրտոզի անվան Երևանի Պետ. Համալսարանի Գիտական աշխատություններ, 1941, հ. 19, էջ 110։

⁴ Ա. Այստեղյան, Քնն. քերակ., էջ 39։

⁵ Պրոֆ. Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, էջ 124։

Երկրորդ և երրորդ դեմքի, ինչպես և մյուս բոլոր դերանունները երկուսի մեջ էլ հոլովվում են նույն կերպ։ Ձևոսկով ածականների, թվականների և այլնի մասին, որոնք նույնպես նույնն են, այժմ վերցնենք ձևաբանական մեկ ուրիշ շատ կարևոր երևույթ՝ խոնարհումը։ Երկուսի մեջ էլ բայն ունի երեք լծարդություն՝ ել, ալ, իլ (սիրել, խոսել, խաղալ), որոնց խոնարհումը նույնն է։ Արևմտահայերենը ունի նույնքան եղանակ, ժամանակ, ինչքան Պոլսի բարբառը։ Ես չեմ խոսում արդեն շարահյուսություն և շարադասություն մասին, սրբ նույնպես լրիվ չափով երկուսի մեջ էլ նույնն է։ Նույնն է նաև հնչյունաբանությունը, արտասանությունը։ Այսպիսով, թե արևմտահայերենում և թե Պոլսի բարբառում քերականություններն ու նույնն է։ Բառապաշարի մասին արդեն խոսելն ավելորդ է, որովհետև սա նույնպես երկուսի մեջ հիմնականում նույնն է։ Ուրեմն հարկ կա այդքանից հետո մեկը համարել լեզու, իսկ մյուսը՝ բարբառ։

Իր ելույթում ընկ. էդ. Աղաջանը ինչ-որ թվեր բերեց։ Նա ասաց, թե արևմտահայերենը արևելահայերենից ունի միայն 38 տարբերություն։ Ես չգիտեմ, թե որտեղից և ինչպես է ստացվել այս թիվը, բայց պետք է ասեմ, որ դա ճիշտ չէ։ Նախ՝ իհարկե, 38 տարբերություն չկա, այլ շատ, իսկ եթե այդ տարբերությունները հաշվենք այսպես՝ չափով տարբերություններ՝ մեկ, խոնարհմանը՝ երկու, շարահյուսություններ՝ երեք և այլն, ուրեմն կտեսնենք, որ տարբերությունները դառնում են հսկայական։ Արևմտահայերենը արևելահայ լեզվից տարբերվում է այնքանով, ինչքան որ մեր ջրե է բարբառ տարբերվում է արևելահայ լեզվից։ Իսկ ինչ վերաբերում է նրա հասկանալի լինելուն, ապա այսպես կոչված արևմտահայ լեզուն նույնքան հասկանալի է, ինչքան Շամախիի, Ջուղայի, Պոլսի և մեր մյուս բարբառները։

Այժմ լինչն է մնում հիմք արևմտահայերենը առանձին լեզու համարելու։ Ոմանց կարծիքով այն, որ նրանով զրվել են շատ գրքեր, ստեղծվել է հարուստ գրականություն։ Ես կարծում եմ, որ սա ևս բավարար հիմք չէ։ Թրիլիսի բարբառով գրեցին երկու խոշորագույն գրողները՝ Սայաթ-Նովան և Գ. Սունդուկյանը, Հարարադի բարբառով գրեցին Ճմբլաչի Խաչանը և ուրիշները, Նոր-Նախիջևանի բարբառով Ռ. Պատկանյանը և այլն։ Դուրս է գալիս, որ եթե այդ բարբառներով նույնպես զրվեին շատ գրքեր, ուրեմն մենք այժմ պետք է ասեինք, թե ունենք ոչ թե երկու, այլ հինգ լեզու։ Ո՞րտեղ է հասցնում այս թուրամաբանությունը։ Եվ վերջապես, լինչ է սովորեցնում մեզ ընկեր Ստալինը. յուրաքանչյուր էթնոս, ժողովուրդ, կամ ազգ կարող է ունենալ միայն մեկ համընդհանուր էթնիկական, ժողովրդական կամ ազգային լեզու։ Նույն ազգային լեզվի ճերկու տարբեր ճյուղավորումներ, կամ տարբերակներ, ճերկու դոյ» (ընկ. էդ. Աղաջանը այս նոր անունով կոչեց) արտահայտությունները, որ երբեմն լսվում է որոշ ընկերներից, բոլորովին էլ հարցը չեն լուծում։ Մենք ընդունում ենք և առաջնորդվում ենք ընկեր Ստալինի դրույթներով, այդ դրույթներից մեկն էլ այն է, որ ազգը յուր կազմավորման օրից ունենում է յուր միասնական, համընդհանուր ազգային լեզուն։ Մի ազգի համար երկու ազգային լեզու ընդունելը անհեթեթություն է և պետք է մերժել, ինչպես մերժում է մարքսիզմը։ Ահա թե ինչ է գրում ընկեր Ստալինը. «Այսպես առերևույթ՝ լեզվի ընդհանրություն, որպես ազգի բնորոշ գծերից մեկը»։

«Ընդհանուր լեզու յուրաքանչյուր ազգի համար...»։ «Զկա ազգ, որը միանդամից տարբեր լեզուներով խոսեր...» (ընդգծումները հեղինակինն են, — Ս. Գ.)¹

Ոչ մի դեպքում չի կարելի մոռանալ ստալինյան այս հստակ և հանճարեղ մտքերը։ Հայերը երբեք էլ բացառություն չեն կազմում, ինչպես տարօրինակ կերպով կարծում են սմանք։ Մենք ունենք և ունեցել ենք, սկսած 19-րդ դարից, մեկ ազգային լեզու, այդ լեզուն արևելահայ դրական լեզուն է, մեր այժմյան համազգային և պետական լեզուն է։ Արևմտահայերենը նույն Պոլսի բարբառն է, չենց տյգ են հաստատում մեր ժողովրդի ուսուցումը, լեզվական մեծահարուստ փաստերը և ստալինյան հանձարեղ սեմանքը՝ ազգի և ազգային լեզուների մասին։

Եվ վերջապես երրորդ հարցը, որի մասին ուզում եմ խոսել, մեր լեզվաչինարարության հարցն է։ Հայոց լեզուն իր դարավոր գոյությունը ընթացքում մշակվել, հղկվել և կատարելագործվել է, դառնալով մեր Միության զարգացում ու մշակված լեզուներից մեկը։ Մեր լեզուն այժմ ունի բնական լեզուներից և այլ լեզուներից փոխառություններ կատարելու, ուղղադրումների և ուղղաթուղթյան կայուն նորմաների պահպանման համար ստեղծված սրբուհի սկզբունքներ։ Այդ սկզբունքները հիմնականում ճիշտ են, բայց լեզվաչինարարության հարցում մենք զեռես քիչ չունենք չլուծված հարցեր կամ ոչ ճիշտ լուծում ստացած խնդիրներ։

Վերցնենք թեկուզ մեծատառերի գործածությունը, որտեղ այժմ խիստ կերպով ասած՝ տիրում է խառնաշփոթություն։ Մեր ուսուցիչներն այժմ չեն կարողանում բացատրել մեծատառերի գործածությունը, որովհետև մամուլում նույնիսկ լեզվաբանների դրած հոգվածներն մեջ, չկա միօրինակություն։ Մեկը «Երևանի Ս. Մարկիանի անվան Մանկավարժական ինստիտուտ» կամ «Հայրենական Մեծ պատերազմ» բառակապակցությունների սկզբնատառերը գրում է մեծատառով, մյուսը միայն առաջին բառն է ակնհայտ մեծատառով, մի երրորդը միայն վերջին բառերն է սկսում փոքրատառով և այլն։ Այս ինքնահոսիս պետք է վերջ տալ, պետք է վերջնականապես լուծվի մեծատառերի գործածության հարցը։ Բայց անմիջականությունը միայն մեծատառերի գործածության մեջ չէ։ Վերցնենք թեկուզ «բացազանչել», «բանկություն» բառերը։ Ճիշտ է, հայերենում վտղ անցյալում գործածվում էր բացազանչել, մեր ժողովրդի խոսքի մեջ այդ բառը մտավ բացականչել և այն ձևով էլ օրինականություն ստացավ նաև ուղղագրության մեջ։ Բնչու հանկարծ փոխվեց դրա ուղղագրությունը, բնչու այդ բառի ուղղագրությունը փոխող ընկերները հաշվի չառան ժողովրդի կենդանի արտասանությունը և ստեղծեցին արհեստական զգվարություն։ Եվ այժմ «Սովետական Հայաստան» թերթը միանգամայն ճիշտ է վարվում, երբ հետևելով ժողովրդի կենդանի արտասանությանը, օգտագործում է բացականչել։ Նույնը պետք է ասել նաև «բանկ» բառի մասին։ Թանգարան բառի մեջ գրվում է գ-իսկ բանկություն բառի մեջ կ-թեև ոչ մեկը բանկություն ձևով չի արտասանում։ Ես կարծում եմ, որ մենք պետք է ամեն կերպ աշխատենք բացառություններ թիվը նվազեցնել և ոչ թե

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 2, Երևան, 1947 էջ 343։

արհեստականորեն մեծացնել, Մեր զբոսը յայնչ որ քան հնարավոր է պետք է մոտեցնել կենդանի արտասանությանը և ոչ թե հեռացնել նրանից:

Մեր լեզուն ուսերենից կամ ուսերենի միջոցով այլ լեզուներից փոխառել է ունիուցիա, կվոլուցիա, տրանսլացիա, կալկուլացիա և այլ բառեր: Մենք ավելի շուտ հետևում ենք ուսերենի արտասանությանը, և այդ միանգամայն հասկանալի է: Հարց է առաջանում, ինչու մարդկանց ստիպում ենք բառերն արտասանել և դրել ոչ թե այնպես, ինչպես ուսերենում, այլ ինչ-որ տարօրինակ ձևով: Հաճախ նույնիսկ այդ արտասանությանը սովորած մարդը այդպես էլ սխալ արտասանում է ուսերեն խոսելիս: Մի քանի տարի է, ինչ որոշ լեզվաբանները մտցրել են այդ փոփոխությունը, բայց ով է արտասանում լուքս, ունիուցիա, տրանսլացիա, լուքսեմբուրգ և այլն, հենց իրենք, այդ փոփոխությունը կատարողները երբեք այդպես չեն արտասանում: Նման բառերի արտասանությունը պետք է կանոնավորվի:

Իսկ ով պետք է անի այդ—անշուշտ, Տերմինաբանական Կոմիտեն, Տերմինաբանական Կոմիտեն իր ժամանակին դոյություն է ունեցել և ծայրահեղությունների հետ միասին, արել է դրական որոշ բան: Կոմիտեն այժմ փաստորեն դոյություն չունի: Պետք է անսլոյմանորեն ստեղծել այդ Կոմիտեն ամենակարճ ժամանակում և այնտեղ ընդգրկել ոչ թե մի 4—5 հոգու, ինչպես առաջ էր, այլ բազմաթիվ մասնագետներ: Մենք պետք է օրինակ վերցնենք մեր եղբայրական ռուսալուրիկայից՝ Վրաստանից, որտեղ Տերմինաբանական Կոմիտեն ունի դործունեություն լայն շրջան և բարձր հեղինակություն:

Երկու խոսք ընկ. Սևովալի ելույթի մասին:

Նախ՝ ճիշտ չէ ընկ. Սևովալի այն հայտարարությունը, թե թոչ մեկը այնպես զժողո՜ւ չէ իր լեզվից, ինչպես մենք հայերս: Մեզանից և ոչ մեկն էլ զժողո՜ւ չէ մեր լեզվից: Գարծում եմ ընկ. Սևովալը հենց զբաղում համոզված է եղել, երբ գրել է. «Մեր լեզվի արժանապատվությունը հասավ այնպիսի բարձրության, որի մասին երազել անգամ չէին կարող ամենալավատես մարդիկ հին պայմաններում, և մենք՝ հայերս լցված ենք այդ արժանապատվության գիտակցությամբ ու հպարտությամբ»:

Գարծում եմ այնպիսի տողեր գրողը այսօր չպետք է հանդես գար այդպիսի սխալ հայտարարությամբ:

Ընկեր Սևովալը առարկելով պրոֆ. Ղափանցյանին, մի չորս անգամ հայտարարեց, թե չլեզվական հարցերի լուծումը չպետք է ենթարկվին անհատի ճաշակին: Այդ ճիշտ է, իհարկե, և ոչ ոք: Ղափանցյանը հայտնում է իր կարծիքները, այդ կարծիքները այսօր նա դնում է բոլորիս առաջ՝ լայն քննարկման:

Հարց է առաջանում, թե ինչու պրոֆ. Սևովալը լեզուն անհատի ճաշակին չենթարկելու հարցը չի դրել վերջին երկու տասնամյակում, երբ առանց հասարակության կարծիքի հաշվի առնելու, առանձին մարդկանց ճաշակով ու նրանց շնորհիվ քառս է ստեղծվել մեր ուղղագրության մեջ, տարօրինակ ձևեր են մտել մեր ուղղագրության մեջ, օրինականացվել են այսօր մերժելի շատ երևույթներ: Օրեկտիվ վերաբերմունքը պետք է հանդես գա ամեն ղեկավարում:

¹ Ե. Ս. Սևովալ, Հայոց լեզվի հարցադրան սովորական ցուցիկ, Սբեն, 1946 թ. էջ 8:

*
*
*

Դիսպուտում մտքերի փոխանակությանը մասնակցած ընկերներից շատերը (Դ. Դեմիրճյան, Հ. Համբարձումյան, Է. Ողայան, Վ. Փոփեյան, Ա. Արրահամյան, Վ. Առաքելյան, Բ. Առաքելյան) հատուկ ուշադրություն չվերցնելով ժամանակակից հայերենի և զրաբարի փոխհարաբերության հարցին, Այս առթիվ ընկ. Դ. Դեմիրճյանը ասաց. «Ես կարծում եմ, որ զրաբարը եղել է համաժողովրդական խոսակցական կենդանի լեզու: Չէր կարող ուրիշ կերպ լինել: Եթե զրաբարը համաժողովրդական կենդանի լեզու չլիներ, ուրեմն պետք է լիներ ժողովրդին տնտեսականալի լեզու, իսկ տնտեսականալի լեզվի համար անհնար էր զիր հնարել, պրականութուն առաջ բերել, կրոնական զրքեր հրատարակել և թարգմանություններ կատարել: Եթե այն ժամանակ զրաբարը մեռած լեզու էր, ապա մեռած լեզվով ժողովրդի համար մի բան թարգմանվել չէր կարող: Այստեղից պարզ է, որ պրաբարը խոսակցական լեզու էր: Մերենն ով էր խոսում այդ լեզվով, միայն բարձր դասը: Եթե այդպես ընդունենք, ապա պետք է եզրակացնենք, որ երկու զասակարգել՝ ժողովուրդը և եկեղեցականությունը իրար չէին հասկանում. սա հակամարտության գրույթ է:

Ճիշտ է, Մովսես Խորենացու լեզուն և եկեղեցական լեզուն միևնույնը չեն, դրանք տարբեր են, բայց 5-րդ դարում այսպես թե այնպես Խորենացու պատմությունն էլ հասկանալի էր ժողովրդին: Հետզհետե բաժանվելով՝ ժողովուրդը առաջ ընկավ իր խոսակցական լեզվի մեջ: Առաջ ընկնելով, նա իր հետ պետք է տաներ նաև եկեղեցականությունը, որը ինչքան էլ զրաբար խոսեր, վերջիվերջո պետք է կանգներ իր ճամփաբաժանի առաջ՝ եկեղեցու խոսակցական լեզվի և պրաբարի միջև: Ավելի առաջ գնալով՝ պրաբարը պետք է զառնար ավելի զժվար լեզու. առանձին ուսում էր հարկավոր այդ սովորելու համար, իսկ թե որ դարում է կատարվում այդ, սա արդեն լեզվաբանների դրադվելու գործն է:

Ընկ. Դեմիրճյանը դառնում է, որ սխալ է այն կարծիքը, թե աշխարհաբարը առաջ է եկել զրաբարի քայքայումից, կամ առհասարակ զրաբարից: Նա կարծում է, որ ժողովրդական, կիսազրական և կիսաարաբոսային լեզուն, ինչպես և զրաբարը, միևնույն հասակն ունեն: Այն կարծիքը, թե աշխարհաբարը հին զրաբարի նոր որակն է, սխալ է մի կողմից, և ուղիղ ուրիշ կողմից: Սխալ է, որ նա միջնադարյան զրաբարի նոր որակն է, բայց ուղիղ է, որ նա նախնադարյան, սկզբնային պրաբարն է: Այդ է պատճառը, որ մեր լեզվի մեջ զրաբար բառամթերքը այդքան չատ է: Ընկ. Դեմիրճյանի կարծիքով զրաբարի բառերի մեծ մասը չինգերորդ դարի մեր լեզվից ստացված բառամթերքն է:

Ընկ. Դեմիրճյանի արտահայտած կարծիքների մեծ մասի հետ համաձայնվեց նաև զրականագետ Համադասյ Համբարձումյանը: Նա ասաց. «Հայոց լեզուն ունի իր անձեռնմխելի, դարերի ընթացքում դարձացած բառարանական փոփոխություն, որը օրդանագես միացնում է մեր արդի զրական լեզուն պրաբարի հետ: Դրաբարը մեռած լեզու է, սակայն նրա բառարանական փոփոխությունը իր մեծագույն բովանդակությամբ կենդանի է և շարունակում է սնունդ տալ մեր զրական լեզվին: Հայոց լեզվի լեկսիկ միավոր-

ները իրենց ճնշող մեծամասնությամբ կենդանի են, ամտածվում են» և, որպես այդպիսին կարող են և պետք է սնունդ տան մեր գրական լեզվին»։

Պրոֆ. է. Աղայանը պաշտպանեց այն տեսակետը, թե գրարարը 5—11-րդ դարերում եղել է հայ ժողովրդի խոսակցական լեզուն։ Նա ասաց, Վրարարը եղել է մեր համաժողովրդական լեզուն 5-րդ դարում և նրանից հետո՝ առնվազն մինչև 9—11-րդ դարերը։ Այլ կերպ ասած, գրարարը ոչ այլ ինչ է, եթե ոչ հին հայերեն համաժողովրդական լեզուն, որը դոյացել է հայ ժողովրդի կաղամպորման պահից, զարգացել, մշակվել է հայ ժողովրդի կողմից, տարածվել է այն պրոցեսին զուգընթաց, որի ընթացքում կաղամպորմող հայ ժողովուրդը իրեն էր ենթարկում, իր մեջ ձուլում բաղամաթիվ մանր ու մեծ ցեղեր մեր տերիտորիայի վրա։ Այդ զարգացող ու մշակվող համաժողովրդական լեզուն հինգերորդ դարում դրի է առնվում, դառնում է գրական լեզու և այդ է, որ մենք կոչում ենք գրաբար։ Հետևաբար այն, ինչ որ մենք ասում ենք գրաբար, ոչ այլ ինչ է, եթե ոչ հայերենի մի վիճակը, որն ընդգրկում է 5—11-րդ դարը։ Կան արդյոք տեղյակներ՝ հաստատելու համար, թե խկապես ժողովուրդը խոսել է այն լեզվով, որով գրել է, օրինակ՝ Կորյունը։ Այո, կան, դրանցից են, ասենք, Սորենացու «Պատմություն» մեջ բերված «Երկներ երկիր» և այլ հատվածները, որոնք իրենց բառամթերքի և քերականության տեսակետից բացառապես գրաբար են։ Չկա որեէ բառ Սորենացու բերած այդ հատվածների մեջ, որ գրաբար չլիներ։ Կարելի է ասել, որ Սորենացին փոխել է այդ հատվածների լեզուն, բայց սա ոչ մի ճշմարտություն չի պարունակի, որովհետև նա այդ նույն ժողովրդական վեպի մասին խոսելիս ինքն էլ ասում է, թե ուղղակի է մեջ բերում հատվածը։ Գրիգոր Մաղիստորոսը նույնպես բերում է մի հատված և այդ հատվածի լեզուն նույնն է, ինչ որ Սորենացու բերած հատվածներինը։ Չկա մի լեզու, որով չկարողանա խոսել այդ լեզուն կրող ժողովուրդը։ Չինական լեզուն շատ զովար է, բայց չինացիները շատ հեշտությամբ խոսում են այդ լեզվով։ Թեքական տիպի քերականություն ունեցող ամենաբարդ լեզուներից մեկն է արաբերենը, այնուամենայնիվ այդ լեզվով խոսում էին բեդվինները, և երբ Սալիֆաթի բանաստեղծները 7—8-րդ դարերում ուղում էին սովորել զասական արաբերենը, գնում էին քոչվորների մոտ և նրանցից սովորում այդ լեզուն։ Հարց է ծագում՝ իսկ ինչու բոլոր ժողովուրդները կարող էին խոսել սեփական լեզվով, իսկ հայ ժողովուրդը չէր կարող խոսել իր ստեղծած լեզվով։

Այնուհետև ընկ. Աղայանը խոսում է գրաբարի մահացման պատճառների մասին։ Հարցն այն է, — ասում է նա, — թե արդյոք գրաբարը մահացավ պետականության կրախի պատճառով, թե՞ մահացավ ինքնին, բայց դրան նպաստեց հայ պետականության կրախը։ Մեր պետականության անկումը բոլորովին էլ չի զուգադիպում գրաբար լեզվի մահացմանը։ 5-րդ դարում մենք ուժեղ, անկախ պետություն չունեինք, նրանից հետո 7-րդ դարում դարձյալ չունեինք և սակայն այդ դարերի մասին ընդունված է ասել, որ նրանք գրաբարի ծաղկման շրջան են եղել։ Ուրեմն այն, որ նույնիսկ 7-րդ դարից, նույնիսկ արաբների արշավանքից հետո գրաբարը դեռևս մահացած չէր, նշանակում է, որ այդ մահացումը անմիջականորեն չի կապվում պետության անկման հետ, ինչպես կարծում է պրոֆ. Լա-

վանցյալները Եթե իսկապես դրաբար լեզվի կրախը կապված էր պետականության անկման հետ, ապա դա պետք է տեղի ունենար այն ժամանակ, երբ հայերը զրկվեցին պետականությունից: Մինչդեռ դրաբարի մահադամը անդի է ունեցել այն ժամանակ, երբ վերստին ունեինք պետություն: Բազրասունինների պետությունը: Լեզուն փոխվում է իր ներքին զարգացմամբ, և հին որակի տարրերի աստիճանական մահացման ու նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով կատարվում է անցում հին որակից դեպի նոր որակը: Այս բանը տեղի է ունեցել շատ և շատ լեզուների հետ, հաև մեր գրաբարի հետ: Եթե հայ պետականությունը գոյություն ունենար 5-րդ դարից մինչև այսօր, տառնց ընդհատման, միևնույն է դրաբարը կմահանար, ինչպես մահացան հին անգլերենը, սլավոներենը, հին պարսկերենը և բոլոր հին լեզուները:

Դրաբարի և ժամանակակից հայերենի փոխարարերություն մասին իր ելույթում խոսեց նաև ֆիլոլոգիական դիտությունների թեկնածու ընկ. Ա. Արրահամյանը: Նա ասաց. «Դրաբարի հարցը շոշափելիս կամ նրա անցյալ վիճակը արժեքավորելիս ու գնահատելիս երբեք չի կարելի դերագնահատել գրաբարը կամ ընդունել դրաբարի լեզվական համակարգի օգտագործումը մեր պայմաններում: Դրաբարը հայ ժողովրդի համար ընդհանուր համաժողովրդական լեզու է եղել. բայց լճ է նշանակում ընդհանուր համաժողովրդական լեզու: Ընդհանուր համաժողովրդական լեզու ասելով պետք է հասկանալ նախ, որ այդ լեզուն հասկանալի է տվյալ լեզուն կրող ժողովրդի կողմից: Այստեղից պարզ է, որ դժվար է պատկերացնել, թե այդ լեզվով, տառացիորեն ճիշտ ունեն ձևով խոսել են հայ ժողովրդի կողմի մեջ մանուկ բոլոր մարդիկ: Այստեղ ես նկատի ունեմ այն հանգամանքը, որ այդ համաժողովրդական լեզվին զուգահեռ, ինչպես ճիշտ կերպով նշեց իր դեկուրման մեջ ընկ. Ղափանցյանը, գոյություն ունեցել նաև բարբառներ, տեղական խոսվածքներ: Բայց բարբառախոս մարդիկ, իհարկե, շատ լավ հասկացել են գրաբարը, այսինքն հին հայերենը, որը հետագայում կոչվեց գրաբար»:

Ընկ. Արրահամյանը նույնպես կողմնակից է այն տեսակետին, որ մեր հնագույն ժողովրդական բանասյուսության սակավաթիվ, բայց շատ բնորոշ նմուշները իրենց լեզվով շատ բան են ասում հին հայերենի համաժողովրդական բնույթի մասին: Մյուս կողմից, ասում է նա, մեր գրերի գյուտը, որ տեղի ունեցավ 5-րդ դարի սկզբում, լեզվարանական տեսակետից հնարավոր էր միայն այն դեպքում, երբ պարզված լինեի մեր լեզվի հնչյունական սիստեմը: Մեսրոպի կատարած գործի մեծությունը նախ այն է, որ Մեսրոպը կարողացել էր պարզել հայերենի հնչյունական համակարգը և ըստ այնմ էլ ստեղծել հայկական տառերը: Պետք է հիշել, որ Խորենացու մոտ պահպանված այն տեղեկությունը, թե գտնված տառերը չէին բավարարում հայկական հնչյունները արտահայտելու պահանջին, պատմական իրողություն է: Այդ նշանակում է, որ հարկավոր էին այնպիսի տառեր, այնպիսի այբուբեն, որոնք լրիվ արտացոլեին հայ լեզվի հնչյունական համակարգը: Կա նաև մի այլ հանգամանք: Մեսրոպը երեսունվեց տառ ստեղծեց, և ոչ թե քառասուն կամ երեսուն՝ այն պատճառով, որ հայ լեզվի հնչյունական համակարգը այդպիսի պատկեր ուներ, որ այն ժամանակ հայ հասարակության համաժողովրդական լեզուն պարունակում

էր 36 հնչյուն և ոչ ավելի։ Մենք ուզում էինք տառեր չի ստեղծել, որովհետև հայ հասարակութեան կողմից այդ հնչյունը այն ժամանակ չէր զիտակցւում, նա չկար մեր լեզվի հնչյունական համակարգի մեջ։ Այստեղից պետք է եզրակացնել, — տառում է ընկ։ Արրահամայնը, — որ եթե գրաբարը կենդանի, խոսակցական լեզու չլիներ, ապա նրա համար տառեր չէին ստեղծվի։

Ընկ։ Արրահամայնը գտնում է, որ գրաբարի համաժողովրդական լեզու լինելու մի ուրիշ ապացույց հանդիսանում է այն փաստը, որ իր ժամանակ տմենականոր համարված գիրքը՝ աստվածաշունչը թարգմանվել է այդ լեզվով, որ այդ լեզվով են թարգմանվել բազմաթիվ այլ կրոնական գրքեր։ Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու գրաբարը չգարձուվ հայերի ազգային լեզու, ընկեր Արրահամայնի կարծիքով դրա պատճառը այն է, որ հայ ազգի կազմավորման ժամանակ գրաբարը արդեն մեռած լեզու էր, իսկ նրա մահացման պատճառները մի կողմից ներքին հանգամանքներով էին բացատրւում, իսկ մյուս կողմից՝ հայ պետականութեան քայքայումով, որն անշուշտ արապացրեց գրաբարի՝ իբրև համաժողովրդական լեզվի կրախը։ Հասկանալի է, որ գրաբարի մահացումը հանկարծակի կատարված կամ միանգամից տեղի ունեցած երևույթ չէր, այլ մի տևական պրոցես։ Ընկ։ Արրահամայնը գտնում է, որ գրաբարի մեռյալ վիճակը պետք է ճանաչել 10 — 11-րդ դարերում, երբ հանդես են գալիս գրավոր հիշատակարաններ, որոնցում գրաբարը արդեն մեծ մասամբ տեղի է տալիս հայերենի նոր որակին՝ միջին հայերենին, որը զգալի չափով տարբերվում է գրաբարից։ Անշուշտ այդ պրոցեսը սկսվել էր դեռ վաղուց, սկսած հավանորեն 7-րդ դարից։

Իր ելույթի մեծ մասը գրաբարի և ժամանակակից հայերենի փոխհարաբերութեան հարցին նվիրեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ռ. Վ. Առաքելյանը։

Դեռևս 1903 թվին, — ասաց նա, — Մառը գրաբարը համարում էր տիրոջ գասակարգի լեզուն։ Ըստ Մառի՝ գրաբարով խոսում էին հեթանոսական կրթություն ստացած իշխաններն ու նախարարները, և շնորհիվ այդ հանգամանքի գրաբարը հզկվում էր, մշակվում ու զառնում նուրբ լեզու։ Այլ խոսքով՝ գրաբարը, ըստ Մառի, տիրոջ գասակարգի լեզուն էր։

Հետագայում հայ բուրժուական բանասերները սևավականացրին Մառի այդ տեսակետը։ Նրանք կարծում էին, թե գրաբարը բարձր ու ազնիվ է՝ ամբողջներում խոսող թագավորների ու իշխանների պես, իսկ աշխարհաբարը անշուք է և խեղճ՝ խրճիթներում ապրող ղեղձուկի նման։ Այս դրույթի ելակետն էր՝ ցույց տալ, որ հայ ժողովրդի լեզվական կուլտուրան ստեղծվել է պալատներում ու ամրոցներում և որ այդ գործին չի մասնակցել ժողովուրդը։ Թվում է, թե լեզվի գասակարգայնութեան ֆորմուլայի կողմնակիցները հենց այս են կամեցել հաստատել։ Այդ է պատճառը, որ բուրժուական բոլոր բանասերները, իսկ նրանցից հետո նաև Մառի ճնոր ուսմունքի ղեղձուկիցները, կառչել էին այս ֆորմուլային, մինչև որ ընկեր Ստալինը մերկացրեց լեզվի գասակարգայնութեան ֆորմուլայի հակամարջսիստական ու հակադիտական էությունը։

Անժխտելի փաստ է, — ասում է ընկ. Առաքելյանը, — որ հարյուր հազարից ավելի բառեր ու ոճեր ունեցող լեզուն, իր քերականական կառուցվածքի հետևողական կանոնների կուռ համակարգով, չի կարող գասակար-

դային լեզու կամ ժարգոն լինելու ներք 5-րդ դարում դիր ու գրականություն ստեղծվեց, հայ ժողովուրդը խոսում էր այն լեզվով, որով թարգմանված են աստվածաշունչն ու ավետարանը, որով գրված է Փայստոս Բուղանգի Շալոյի պատմությունը, Սրանց լեզվի և բանավոր խոսքի տարբերությունը այնքան էր, որքան եղել է և կմնա բոլոր դարերի բանավոր և գրավոր խոսքի տարբերությունը:

Ֆեոդալիզմի շրջանում գրավոր խոսքը էլ ավելի է սահմանադատվում բանավոր խոսքից: Բոլոր հին գրավոր լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ գրական խոսքի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունք է եղել թե՛ ժողովրդի, և թե՛ հենց գրական շրջանի մարդկանց կողմից. այն, ինչ պարզ էր ու հասկանալի, չէր պահանջում, չէր հարգվում գրողների կողմից, որոնք ձգտում էին խճողել ու բարդացնել իրենց ոճը՝ դիտուն երևալու ցանկությունով: Ժամանակի ոճական պահանջներից ելնելով մեր բոլոր պատմիչներն էլ իրենց զբոսը սկսում են մի զրկական խժոժարանությամբ, որ սակայն աստիճանաբար մեղմանում է և վերջապես ոճը դառնում է սովորական ու մարդկային: Դրավոր լեզուների համար միս ու արյուն դարձած ճոռոմարան ոճի այս պաշտամունքը ճնշում էր բոլոր ուղեղները և ամեն ոք ձգտում էր գրավոր խոսքը հեռացնել բանավորից: Մեր լեզվի պատմությունը բաղաժամով փաստեր է տալիս այս առթիվ: 5-րդ դարում Աղաթանգեղոսին, Սսկերեբանին, Կորյունին հակադրվում են Բուղանգը, հին և նոր կտակարանները և նույնիսկ Նզնիկը: Վերջիններիս զրկածքները աչքի են ընկնում իրենց կանոնավոր շարանյութությամբ և ոճի բյուրեղացած ժողովրդայնությամբ: Ավելի ուշ՝ Խորենացուն և Դավիթ Անհագթին հակառակ է եղելի ու Ղազար Փարպեցու ոճը: 7-րդ դարում Թեոդորոս Քոթենավորի և Հովհան Խմաստասերի ոճը հակադրվում է Հովհան Մամիկոնյանի և Սեբեոս եպիսկոպոսի ոճին: Վերջապես 9-րդ և 10-րդ դարերում Հովհաննես կաթողիկոսի, Թովմա Արծրունու և Դրիգոր Նարեկացու զրկածքներին հակադրվում են Շապուհ Բաղրատունու, Ստեփանոս Ասողիկի և Ուխտանես եպիսկոպոսի ոճը, որոնք համաժողովրդական հայերենը պահել են իր դասական պարզության մեջ՝ այդ դարերի բանավոր խոսքի բոլոր բարեմասնություններով: 10-րդ դարում երկու տեսակ գրարար կար. մեկը դիտավորյալ բարդացրած ու անհասկանալի իսկ մյուսը՝ պարզ, հասկանալի՝ իր ժամանակվա բանավոր խոսքի նման ու կենդանի:

Հարց է առաջ գալիս. այս երկուսից որը պետք է համարել գրաբար: Մի գարմանալի կարուծությամբ թե կուրամտությունով իսկական գրաբար է համարվել խրթինը, արհեստականը, որ իսկապես ժարգոն է, մեռած լեզու: Մինչդեռ ավելի պարզ ու հասկանալի գրաբարը սովորաբար համարվել է ազավազված՝ համեմատելով Խորենացու և Դավիթ Անհագթի լեզվի հետ:

Ընկ. Վ. Առաքելյանը իր ելույթում հիմնականում ճիշտ բնորոշելով գրաբարի ծագման ու դարգացման խնդիրները, միաժամանակ դարգացնում է այն ոչ ճիշտ տեսակետ, թե գրաբարը երբեք չի մահացել: Նա ասում է Վրարարի մեռած լինելու միջև պետք է դեն նետել, նա շարունակել է դարգանալ բանավոր խոսքի մեջ և տվել է նոր որակ: Մեր կարծիքով, հայ ազգային լեզուն մեր հին համաժողովրդական լեզվի նոր որակն է, որ բարձրացել է մի նոր աստիճանի, ազգային և գրավոր լեզվի աստիճանի:

Միայն մի տարբերություն, որ այդ նոր աստիճանը ստեղծվեց ոչ թե հին դրավոր լեզվի դարդադաման պրոցեսում, այլ բանավորի՝

Ընկ. Վ. Առաքելյանի այդ տեսակետի դեմ արտահայտվեց պատմական գիտությունների թեկնածու ընկ. Բ. Առաքելյանը՝ Նա ասաց, «Գրաբարի դարդադաման սխեման, որ դրվեց ընկ. Ղափանյանի կողմից, ինչ թվում է, որ ընդհանրապես ճիշտ է, բայց դեռ պետք է շատ կոնկրետացվի»։ Ես կարծում եմ, որ մեր լեզվաբանները գրաբարը շատ են սպանում։

Համամիտ չլինելով հանդերձ ընկ. Վ. Առաքելյանի այն կարծիքին, թե գրաբարը երբեք չի մահացել և պահպանվել է որպես բանավոր խոսք, ես կարծում եմ, որ դրարարը չէր կարող այդքան շատ մեռնել։ Գրաբարը որպես մատուցական, հասկանալի լեզու, գոյություն է ունեցել, բայց հետո որոշ ժամանակ դադարել է գոյություն ունենալուց և դարձել գրի լեզու, որը թեև օտար չէր, բայց անհասկանալի էր ժողովրդին։ Չի էլ կարելի հարց դնել, թե դրաբարը երբեք չի մեռել և միշտ պահպանվել է որպես խոսակցական լեզու։ Ինչ թվում է, որ այդ տեսակետը սխալ է և պետք է մերժվի։ Փաստ է, որ 11—13-րդ դարերում Այրարատում, Այունիքում, Շիրակում, Երզնկայում և Վանում գրաբարով գրում և հասկանում էին։ Ասում են, թե դա միջին հայերենն է։ Ընդունենք այդ տեսակետը, որ մինչև այժմ տիրապետող է։ Անշուշտ 12—13-րդ դարերի լեզվի և դասական համարվող դրաբարի միջև տարբերություն կա, սակայն եթե այդ դասական բարձունքներից իջնենք և համեմատենք միջին հայերենը 9—11-րդ դարերի գրարարի հետ, կտեսնենք, որ տարբերությունը մեծ չէ, որ նոր որակ կազմի պետք է վերանայվի այն տեսակետը, թե միջին հայերենը նոր սրակի լեզու է։

Խոսելով դրարարի և ժամանակակից հայերենի փոխարարերության մասին, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Զահակյանը ասում է. «Մեր գրավոր հիշատակարանները 5-րդ դարից այն կողմ չեն անցնում, պարզ է, որ գրավոր հիշատակարաններով մեզ հասած լեզուն գիտական նկատառումներով պետք է բաժանենք ուժ էտապների՝ չանջատելով դրանք իրարից։ Հայոց լեզվի այդ դրավոր շրջանի անցած փուլերը հայանի են հին, միջին և ժամանակակից հայերեն անուններով։ Բայց դրանց կողքին կան նաև գրարար և աշխարհարար անվանումները, որոնք հանդես են եկել այն ժամանակ, երբ դրարարը դադարել էր այլևս համաժողովրդական լեզու լինելուց։ Այդ ժամանակաշրջանում հանդես են գալիս «աշխարհիկ խոսք» և «գրաբար» անվանումները, որոնք մնացել են դրականություն մեջ։ Պարզ է, որ դրարարի և աշխարհաբարի փոխարարերության մասին եղած վեճերը զգալի չափով պայմանավորված են տերմիններով։ «Հին հայերեն» և «նոր կամ ժամանակակից հայերեն» տերմինների փոխարեն դործածվող «գրարար» և «աշխարհարար» տերմինները շփոթություն մեջ են գցում և անջատում իրարից հայերենի դարդադաման փուլերը, որովհետև այդ տերմինները ոչինչ չեն ասում դրարարի և աշխարհարարի բնույթի ու փոխարարերության մասին։

Հայ ժողովրդի և նրա համաժողովրդական լեզվի՝ դրարարի առաջացման կապակցությունները ինչպես գեկույցողը, այնպես էլ ելույթ ունեցող որոշ ընկերներ կանգ առան այդ լեզվի առաջացման պրոցեսի հետ կապված մի շարք խնդիրների վրա։ Ընկ. Հ. Համբարձումյանը առարկեց պրոֆ. Ղա-

փանդյանի այն տեսակետի դեմ, թե հայերենի հիմքում բնկած է Հայաստանցի ախմարի լեզուն: Այս առթիվ նա ասաց. «Ակադեմիկոս Ղափանցյանը պնդում է, որ հայերը առավել 15 դար մեր թվականությունից առաջ ապրել են իրենց ուրույն, հնագիտական աղբյուրներում հիշատակվող «Հայաստան» պետական կազմակերպությամբ, որ այն ժամանակ նրանք խոսելիս են եղել այն լեզվով, որը դարդանալով, հետագայում դարձավ համաժողովրդական լեզու: Վերջնականապես ձևավորվելով մեր թվականության հինգերորդ դարում: Հարց է ծագում, ինչով է ապացուցված, որ «Հայաստան» կոչված պետական կազմավածքում հիրավի խոսում էին հայոց լեզվով: Կան արդյոք այդպիսի համոզիչ ապացույցներ: Իր «Хайаса-колыбель армян» աշխատության մեջ բնկ. Ղափանցյանը բերում է մի քանի բառեր, որոնց հնչյունարանություն ու մորֆոլոգիան կարծես համապատասխանում են մեր լեզվի նույնանման բառերին, սակայն անկասկած է, որ այդ օրինակները հենված են միայն լեզվական նմանություն վրա, մինչդեռ լեզվագիտությունից հայտնի է, որ լեզուների տարրեր տարրեր կարող են նման լինել պատահաբար, և ոչ իբրև հետևանք նույնական օրինաչափություն: Ընկ. Համբարձումյանը պտնում է, որ պրոֆ. Ղափանցյանի այդ տվյալները միայն ենթադրություններ են և ոչ թե գիտականորեն հաստատված փաստեր: Նրա կարծիքով անհատականալի է, թե ինչպես հայասերի լեզուն, 2000 տարի շարունակ գոյություն ունենալով հանդերձ, միմիայն մեր թվականության հինգերորդ դարում կարողացավ ձևավորվել իբրև համաժողովրդական ընդհանուր լեզու: Ամեն մի լեզու, ասում է նա, եթե հիրավի պտնվել է այդ օրինակ երկարատև դարդացման պրոցեսի մեջ, պետք է կարողանար շատ ավելի փաղ կազմավորվել ու դառնալ համաժողովրդական լեզու:

Նույն հարցի կապակցությամբ ընկ. Բ. Առաքելյանը հայտնեց այն կարծիքը, թե հայ ժողովրդի և հայերենի առաջացման հարցում «Հայաստանի» առաջատար դերը բնութենելով հանդերձ, պետք է նշել, որ հայոց լեզվի և նրա դարդացման հարցը ավելի շատ ենթադրաբար է դրվում, քան թե հիմնավորվում: Անհրաժեշտ է կոնկրետ փաստական նյութի հիման վրա բացահայտել իրական պատմական պրոցեսը, որի բնթացքում հայ ժողովուրդը և նրա լեզուն կազմավորվեցին: Այդ պրոցեսի բացահայտման ուղղությամբ շատ աշխատանք պետք է կատարեն և՛ լեզվաբանները, և՛ պատմաբանները:

Նույն միտքը արտահայտեց նաև բնկ. Ջահուկյանը: Նա ասաց. «Ընկ. Ղափանցյանը իր գեկուցման մեջ փորձեց ցույց տալ, որ պարարբ ներկայացնում է «Հայաստանի» լեզվի դարգացման հետագա աստիճանը, բայց զժրախտաբար այդ տեսակետը ապացուցելու համար նա բավականաչափ հիմնավոր փաստեր չի բերում: «Հայաստանի» լեզվից համարյա ոչինչ չի մնացել, մեղ հասել են միայն մի քանի տեղանուններ և աղպանուններ, որոնց տեղադրությունն ու բացատրությունը մասամբ ավել է պրոֆ. Ղափանցյանը իր «Хайаса-колыбель армян» գրքում: Մնացած բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք պետք է ցույց տան այդ լեզվի կապը ընդհանրապես հայերենի և մասնավորապես զրարարի հետ, բոլորովին բացակայում են: Մինչև հիմա ոչ ոք չի ապացուցել, որ հայերենը իր հիմնական տարրերով՝ բառապաշարի հիմնական մասով կամ հիմնական բառա-

րանային ֆոնդով և քերականությունում հնդերոպական լեզու չէ։ Լնկ. Ղափանցյանը իր աշխատությունների մեջ ցույց է տալիս, որ հայերենը փոքրասիական կամ ասիանիկ լեզու է. սակայն փոքրասիական լեզուների ընդլայնումը հարցը մինչև հիմա զիստությամբ համար մնում է իրրև պրոբլեմատիկ հարց։ Ահա թե ինչու հայերեն լեզուն փոքրասիական լեզու համարել նշանակում է լեզվական մի պրոբլեմը, այն է՝ հայերենի ծագման հարցը բացատրել լեզվական մի ուրիշ պրոբլեմով, որը նույնպես լուծված չէ։ Փոքրասիական կոչված լեզուների մասին դիտությունն մեջ հայտնված են մի շարք տեսակետներ։ Ոմանք այդ լեզուները համարում են հնդերոպական, իսկ ուրիշները այդ չեն ընդունում։ Լնկ. Ղափանցյանը կողմնակից է վերջին տեսակետին։ Հայերենի քերականությունը նրա մոտ բացատրվում է իրրև խաչավորված քերականություն՝ մասամբ հնդերոպական, մասամբ էլ փոքրասիական բաղադրիչներով։ Ես կարծում եմ, որ այդ ճիշտ չէ։ Եթե ընդունենք, թե մեր լեզվի քերականությունը կարող է միաժամանակ պարունակել և՛ հնդերոպական, և՛ փոքրասիական տարրեր, ապա կհանգենք այն կարծիքին, թե լեզուների խաչավորումը տալիս է նոր լեզվական որակ, այսինքն կհանգենք մի տեսակետի, որը պետք է մերժվի, որպես ընկեր Ստալինի լեզվաբանական ուսմունքին հակասող տեսակետ։ Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ մենք կարող ենք պարզ պատկերացում ունենալ միայն այն ժամանակ, երբ ժամանք, թե հայոց լեզուն ինչպիսի լեզու է և ինչպիսի ծագում ունի։ Միայն այդ դեպքում է հնարավոր պարզել նաև այն հարցը, թե դրարարը որտեղից է դալիս և վարձացման ինչ ուղիների է անցել։

* * *

Դիսկուսիայի ընթացքում խիստ քննադատության ենթարկվեց այն տեսակետը, որի համաձայն ներկայումս գոյություն ունի երկու հայերեն՝ «արևմտահայերեն» և «արևելահայերեն», այսինքն երկու հայ ազգային լեզու։ Այս հակադիտական ու տեսկյիտն տեսակետի քննադատությամբ հանդես եկան թե ղեկուցողը, և թե ելույթ ունեցողներից շատերը։

Այս առթիվ ընկ. Դ. Դեմիրճյանն ասաց. «Մինչև այն օրը, երբ հայ պետականությունը կազմվեց, այսպես կոչված արևմտահայ լեզուն ուներ զրական լեզվի որոշ արժեք, բայց մեր պետականությունը ստեղծվելուց հետո կյանքի հանդամանքները բոլորովին փոխվեցին։ Այժմ այդ «լեզուն» ապրում է միայն արտասահմանի հայկական զաղութներում, որտեղ նա չունի իրեն սնող բուն տարրերը։ Յիր ու ցան եղած ժողովուրդը՝ այլևս չի կարող ստեղծել իր համար մի բարձր կուլտուրայի լեզու։ Իհարկե, նա նույն մեր ժողովուրդն է, նրա մի մասը, սովետահայ ժողովրդի մի մասը, մի ժողովրդի, որը ունի պետական մեկ լեզու, որ ահա երեսուն տարվա մեջ հսկայական թուլիք է կատարել և դարդանում է կուլտուրապես բարձր այնպիսի մի ժողովրդի ու լեզվի օգնությամբ, ինչպիսին է ոուս ժողովուրդը և նրա լեզուն։ Այն լեզուն, որ հետո է ժողովրդից, որ վաղուց արգեն կորցրել է իր ժողովրդականությունը և դառել է կեղծ լեզու, դառել մի այնպիսի լեզու, որի նմուշները մենք տեսնում ենք Վալաթանի և ուրիշների մոտ, այդ լեզուն չի կարող ծաղկել և անխուսափել-

լիորեն պետք է հետադիմի ու անհայտանալ (Այսօր, եթե կարգաճարտասահմանյան հայ թերթերը, կտեսնենք, թե ինչքան առաջ է զնաղել «արևմտահայերենի» ղեղադրացիայի պրոցեսը. ամեն մի թերթ ու ամեն մի գրող աշխատում է ստեղծել իր քերականությունը)։ Այդ «լեզուն» ներկայումս միասնականություն չունի և դա նրա անկման ամենալավ ասպնջությունն է։

Եւ այն տեսակետը պաշտպանեց նաև պրոֆ. է. Աղայանը։ «Մենք, — ասում է նա, — չունենք երկու լեզու, այսպես կոչված արևելահայերենը և արևմտահայերենը առանձին լեզուներ չեն, այլ կազմում են մեկ ընդհանուր լեզու։ Ինչպես մեկ է հայ ժողովուրդը, այնպես էլ մեկ է նրա լեզուն, որովհետև ինչպես ուսուցանում է ընկեր Ստալինը, մեկ ազգը կարող է ունենալ միայն մեկ լեզու։ Այն ժամանակ, երբ կազմավորվում էր մեր ազգը, այս երկու «լեզուները» փաստորեն հանդիսանում էին հայերենի երկու հատվածները, ճիշտ այնպես, ինչպես մեր ազգն ունի իր երկու հատվածը՝ բուն Հայաստանում և նրանից դուրս։ Արևելահայ հատվածի լեզուն հետագայում զարգացավ, ավելի բարձրացավ և գերակշռություն ստացավ այն բանի հիման վրա, որ հայ ազգի առաջացման կենտրոնը դարձավ հենց այս հատվածը։ Բնական է, որ այս հատվածի լեզուն էլ դարձավ ազգային և համընդհանուր լեզու, իսկ մեր օրերում ոչ միայն համընդհանուր, այլև միասնական — պետական լեզու, մինչդեռ արևմտահայ հատվածի լեզուն զնաղել է և զնում է դեպի զեպրադացիա»։

«Արևմտահայերենի» և Սովետական Հայաստանի պետական լեզու դարձած ժամանակակից հայերենի փոխհարաբերության մասին խոսեց նաև րնկ. Բ. Առաքելյանը։ Նա նույնպես հայտնեց այն միտքը, որ այդ երկուսը տարբեր լեզուներ չեն, այլ հանդիսանում են միևնույն ժողովրդի լեզուն։ Սակայն միևնույն ժողովրդի լեզուն լինելով հանդերձ, նրանք նույնական չեն. նրանց միջև կա որոշ տարբերություն՝ այնքան չնչին, որ նրանցով խոսող տարբեր մարդիկ առանց որևէ դժվարության հասկանում են միմյանց։ Սա նշանակում է, — ասում է րնկ. Առաքելյանը, — որ նրանք տարբեր լեզուներ չեն, այլ միևնույն լեզվի հատվածները, ընդհանուր հայերենի երկու հատվածները, ճիշտ այնպես, ինչպես Արևմտյան Հայաստանը ընդհանուր Հայաստանի հատվածն է, իսկ արևմտահայ ժողովուրդը՝ հայ ժողովրդի հատվածը։ Բայց րնկ. Առաքելյանը գտնում է, որ ճիշտ չէ այստեղից արվող այն ենթադրությունը, թե արևմտահայ ժողովրդի լեզուն հանդիսանում է զուտ բարբառ։ Անշուշտ, ինչպես Արևելյան, նույնպես և Արևմտյան Հայաստանում կան բազմաթիվ բարբառներ։ Ընկեր Ստալինը իր վերջին աշխատության մեջ խոսում է տերիտորիալ բարբառների և ժարգոնների մասին։ Պարզ է, որ այսպես կոչված արևմտահայերենը չի կարելի դասել զրանցից ոչ մեկի և ոչ էլ մյուսի շարքը։ Դա հայերենի մի հատվածն է, որով հայերը զրում և խոսում են Միջերկրական ծովի ափերին և Ֆրանսիայում, Արևելյան Եվրոպայի գեոգրատական երկրներում և Ամերիկայում, խոսում են արտասահմանի հայությունից ամենատարբեր խավերը։ Ահա թե ինչու այդ «արևմտահայերենը» չի կարելի դնել ընկեր Ստալինի ասած որևէ բարբառային կատեգորիայի տակ։ «Արևմտահայերենը», — ասում է րնկ. Առաքելյանը, — այսօր արագ կերպով մոռացվում է, նրան խառնվում են օտար ու խորթ շատ բառեր և

ոճեր, նա աղավաղվում է, ապականվում և զուրկ է հետադա զարգացման ու առաջադիմության որևէ հեռանկարից: Նրա միակ հեռանկարը մեր համաժողովրդական, պետական լեզու դարձած հայերենի մեջ լուծվելու հեռանկարն է, և դա կատարվում է մեր աչքերի առաջ՝ հայերի հայրենազարծության շնորհիվ:

* * *

Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցող ընկերները մեծ ուշադրություն նվիրեցին նաև լեզվաշինարարության, մասնավորապես ուսուցչական լեզվի, հայ բարբառների, գրարարի և օտար լեզուների օգտագործման հարցերին: Այս կապակցությամբ շոշափվեցին նաև լեզվի մաքրության՝ հատկապես գեղարվեստական և թարգմանական գրականության լեզվի մաքրության խնդիրները:

«Թումանյանից հետո, — ասում է ընկ. Դեմիրճյանը, — բարբառներից օգտվելու հարցը, բարբառների քերականությունից օգտվելու հարցը թողնելից: Սովետական իշխանության ժամանակ արդեն առաջ եկան ուրիշ խնդիրներ, մեր ժողովուրդը բարձրացավ: Բարձրացավ նրա կուլտուրան, նրա արդյունաբերությունը, տեխնիկան, գիտությունը, եթե մինչև այդ մեր լեզուն գրական լեզու էր, այսօր արդեն այն ոչ միայն գրական լեզու է, այլև պետական, համաժողովրդական լեզու, որի ստեղծմանը մասնակցում են ոչ միայն գրողները, այլև մեր պետականության բաղաժաթիվ բնագավառների գործիչները՝ իրենց բոլոր մասնագիտություններով, իրենց սպեցիֆիկայով: Այնպիսի հարուստ լեզու է ստեղծված մեր զանազան ինստիտուտների, մեր արդյունաբերության, առևտրի, մեր տեխնիկայի մեջ, որ այսօր մեր գրողներն անգամ պետք է սովորեն, որպեսզի կարողանան հասկանալ այդ բնագավառի էջանքը»:

Ընկ. Դեմիրճյանը գտնում է, որ մենք պետք է օգտվենք և՛ գրարարից, և՛ բարբառներից: Մեր բարբառները, ասում է նա, շատ մեծ հարստություն ունեն, որը մենք դեռ չենք սպառել: Երբ կսպառենք, կքամենք բարբառների և գրարարի ամբողջ հյուսիքը, այն ժամանակ միայն նրանք վերջնականապես կանհետանան: Միևնույն ժամանակ ընկ. Դեմիրճյանը պաշտպանում է այն տեսակետը, թե բարբառներից չպետք է օգտվել իբրև գրական լեզվի էլեմենտների: Նրա կարծիքով՝ բարբառը պետք է գործածել միայն հերոսների տիպային լեզվի մեջ, պահպանելով գեղարվեստական չափը:

Նույն հարցի կապակցությամբ ընկ. Հ. Համբարձումյանը ասաց. «Լեզվաշինարարությունը կարող է և պետք է հիմնված լինի անփճելի գիտական սկզբունքների վրա, որպեսզի լեզվի զարգացման խնդիրները իրենց ազելվատ ու ճշգրիտ լուծումն ստանան ոչ թե անհատական ցանկությունների և ճաշակների ուղղությամբ, այլ՝ իբրև գիտականորեն հիմնավորված աներկբայելի սկզբունքների հետևություններ: Ամեն անգամ, երբ խնդիր է դրվում լեզվաշինարարության մասին, երբ ենթադրվում են լեզվական փոփոխություններ, մենք պետք է ելնենք գիտական սկզբունքներին և ոչ անհատական ցանկություններից ու ճաշակից»:

Հետաքրքիր էր բառարանագիր և թարգմանիչ ընկ. Վ. Փաթեյանի ելույթը, որը կանգ առավ լեզվաշինարարության և հատկապես տերմինա-

շինություն մի շարք կարևոր և գործնական նշանակություն ունեցող խընդիրների վրա: Հայերենի ոճի խախտման դեպքերը,—ասաց ընկ. Փոթեյանը,—մեծ չափով տեղի են ունենում թարգմանությունների մեջ: Եվ այդ հասկանալի է: Բնագիրը մեծ չափով կաշկանդում է թարգմանչին: Լեմենոն էլ սկզբունքով համամիտ են, որ պետք է ազատ թարգմանել, բայց գործնականում այս սկզբունքը հաճախ խախտվում է, մենք չափազանց տառացի ենք թարգմանում նույնիսկ գեղարվեստական գրականությունը: Լեզատ թարգմանությունը դժվարանում է հատկապես քաղաքական—իդեոլոգիական երկերի նկատմամբ, երբ բնագրի ճշգրիտ թարգմանության մեծ անհրաժեշտությունը թե՛ թարգմանչին և թե՛ մանավանդ խմբագիրներին պարտավորեցնում է համարյա տառացի թարգմանելու և հաճախ խախտելու հայերենի ոճը: Հայերենի ոճական կառուցվածքի տարբերությունը ուսերենից՝ բառացի թարգմանության ժամանակ չի ապահովում շարադրանքի այն սահունությունն ու բառերի փոխադարձ կապը, որը պահպանում է ուսերենը՝ նույնիսկ ամենամեծ պարբերությունների մեջ, շնորհիվ ուսերեն բառերի սեռային վերջավորությունների: Լեզատ թարգմանելու համար անհրաժեշտ է արմատական բեկում կատարել թարգմանության միջև աշխատելու կիրառվող սկզբունքների մեջ: Լեզ գեղեցիկ, անշուշտ, մեծ չափով կբարձրանա մեր թարգմանությունների որակը թե՛ ոճի սահունության և թե՛ մյուս բոլոր տեսակետներից:

Սկզբունքային տեսակետից չափազանց կարևոր է օտար բառերի գործածության հարցը. այս առթիվ տարբեր ժամանակներում տարբեր տեսակետներ են իշխել հոգուտ օտար կամ հայերեն բառի: Ինքնին հասկանալի է, որ այս հարցը մի որոշումով լուծելը խիստ դժվար է. հնարավոր չէ մշակել և պարտագիր հայտարարել բոլոր կոնկրետ դեպքերի համար հավասարապես կիրառելի մեկ սկզբունք: Միակ սպառնալիք միջոցն է՝ կազմել այն օտար բառերի ցուցակը, որոնք չեն փոխարինվելու հայերեն բառերով: Ինչ վերաբերում է հարցի սկզբունքային կողմին, ապա հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ առանց օտար փոխառությունների չի կազմվել ու չի կարող դարգանալ ոչ մի լեզու: Մեր լեզուն ևս իր սկզբնավորման շրջանում մեծ թվով բառեր է փոխառել պարսկերենից, հունարենից, ասորերենից, սակայն այդ բառերն այնպես են ձուլվել մեր լեզվի հետ, որ մենք այժմ շատ դեպքերում չենք էլ գիտակցում, թե դրանք օտար բառեր են: Հետագա ավելի ուշ շրջանում և հատկապես վերջին 30 տարում, երբ սովետահայ լեզուն ավելի սերտորեն կապվեց ուսական կուլտուրայի ու լեզվի հետ, շատ մեծ թվով գիտական-տեխնիկական տերմիններ մտան մեր լեզվի մեջ: Լեզ կարգի փոխառությունները անշուշտ կատարվելու են նաև հետագայում, որովհետև գիտա-տեխնիկական տերմինաբանության միջոց էլ պահպանելու է իր ինտերնացիոնալ բնույթը: Սակայն այդ չի նշանակում, թե բոլոր օտար տերմիններն անխախտ պետք է պահպանվեն նաև այժմ, երբ մեր սովետահայ լեզուն դարգացման բարձր մակարդակի է հասել և նոր գաղափարներն արտահայտելու, նոր տերմիններ կազմելու համար իր բառային հարուստ ֆոնդն օգտագործելու լայն հնարավորություն ունի: Ուշագործության արժանի է այն փաստը, որ այժմ սկսվել է ուսերեն, նույնիսկ նեղ տեխնիկական տերմինաբանության օտար բառերից ազատագրելու և օտար տերմինները հնարավորության դեպքում

ոռուսերեն մասսայական ընթերցողին ավելի հասկանալի տերմիններով փոխարինելու մի առողջ շարժում։ Ուստի օտար բառերի զործածությունյան հարցում հավասարապես անընդունելի են երկու ծայրահեղությունները ևս՝ մի կողմից անխտիր բոլոր օտար բառերը թարգմանելու ձգտումը, իսկ մյուս կողմից՝ առանց անհրաժեշտության բոլոր օտար բառերը պահելու ձգտումը։

Ընկ. Փոթեյտնը գտնում է, որ սկզբունքային կարևոր հարցերից է զրաբարի օգտագործման հարցը։ Որ զրաբարը, որպես մեռած լեզու, այլևս չի կարող վերակենդանացվել. այս մասին երկու կարծիք չի կարող լինել։ Անվիճելի է նմանապես, որ մեր արդի աշխարհարար լեզուն շատ մեծ փոփոխություններ է կրել և գրաբարից. այսօրվա բառերի մեծագույն մասը անցել է զրաբարից անփոփոխ և փոփոխված ձևերով, սակայն այդ բառերը մերվել, ձուլվել են մեր այժմյան լեզվի հետ, չեն զիտակցվում որպես զրաբարային ձևեր և մեր լեզվի անրաժան տարրերն են կազմում, սրանցից հրաժարվել մենք չենք կարող, և այդ անհրաժեշտ էլ չէ. բոլոր լեզուներին հատուկ են լեզվի հին շրջանից մնացած առանձին բառերն ու արտահայտությունները։ Բացի դրանից, զրաբար արտահայտություններն ու բառերը իրենց հատուկ տեղում լեզվական երանգ, կոլորիտ են ստեղծում, ունեն բանաստեղծական, երբեմն հեղինական իմաստ։ Առանձնապես դրանք պարտադիր են թարգմանությունների մեջ, երբ հեղինակը բնադրում զործ է ածում համապատասխան աղբյուրից, գրական հին հիշատակարանից վերցրած այս կամ այն բառն ու արտահայտությունը։ Հայտնի է, որ խոսքի այնպիսի հանճարեղ վարպետներ, ինչպես Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը, երբեմն նույնպես օգտագործում են եկեղեցական—սլավոնական լեզվի բառեր ու արտահայտություններ։ Նման դեպքերում լեզվի հին շրջանից կամ հին աղբյուրից վերցրած բառերի ու արտահայտությունների թարգմանությունը արդի լեզվով թույլատրելի չէ. այդ կնշանակել խախտել հեղինակի լեզվի առանձնահատկությունը, ոճն ու պատկերավորությունը։ Երաբարից վերցված նման բառեր ու արտահայտություններ զործածել կարող են նաև մեր գրողներն իրենց ինքնուրույն գործերում։ Նման արտահայտությունները, սակայն, պետք է բերվեն բացառիկ դեպքերում, որպես ամբողջական կապակցություններ և միայն գրական լեզվի ֆոնի վրա։ Չի կարելի այդ կապակցություններից առանձին բառեր անջատել ու զործածել իրենց արխայիկ ձևով կամ այդ կապակցությունների քերականական ձևերը ընդհանրացնել և դարձնել լեզվական նորմա։ Երժրախտաբար մեր գրողները, երբեմն նաև թարգմանիչները, հաճախ խախտում են այս սկզբունքը, զրաբարի օգտագործման հարցում չպահպանելով չափի զգացումը։ Այս տեսակետից բնորոշ են մեր անվանի գրողներ Դեմիրճյանի «Վարդանանք»-ը և Ջալալյանի «Արա Գեղեցիկը»։ Մեր հեղինակներից ու թարգմանիչներից ոմանք լուրջ մոտեցում չունեն զրաբար բառերն ու արտահայտությունները համապատասխան տեղում զործածելու հարցում, զրաբարը զործ են ածում առանց այդ լեզվի տարրական կանոններին ծանոթ լինելու։

Դարևոր է նաև հայերեն բարբառներից օգտվելու հարցը։ Մեր բարբառները արդի գրական լեզվի հարստացման կարևոր աղբյուրներից մեկն են եղել և մնում են։ Այդ բարբառներում կան շատ զիպուկ արտահայտու-

թյուններ, առանձին բառեր, որոնք կարող են օգտագործվել զբաղական լեզվում պակասող բառերն ու արտահայտությունները փոխարինելու համար. այս աղբյուրից օգտվել կարելի է նույնիսկ նեղ մասնագիտական տերմիններ վերցնելու համար. Հասկանալի է, որ բարբառներից պետք է վերցնել միայն այն բառերն ու արտահայտությունները, որոնք իրենց ձևով և քերականական կառուցվածքով մաքուր հայերեն բառեր են. բարբառային քերականական ձևերը չեն կարող բնդհանրացվել և մտցվել զբաղական լեզվի մեջ. այլ կերպ չի կարելի հասկանալ մեր զբաղական լեզվի մաքրության և անաղարտության սկզբունքը:

ՔՄԵՐ լեզուն, — ասում է ընկ. Փոթեյանը, — երկու հազար տարվա պատկառելի անցյալ ունի. մեր նոր զբաղական լեզուն բոլորում է իր հարյուրամյակը: Ինչո՞ւ նախաստվետական շրջանում նա բավարարում էր հրապարակախոսության և գեղարվեստական զբաղանությունների իր ժամանակվա պահանջներին և ի վիճակի էր սպասարկելու զիտական մտքին: Մոփեստական իշխանությունների տարիների ընթացքում, շնորհիվ լենինյան — ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության, մեր լեզուն աճեց այնպիսի աննախընթաց թափով, նա անցավ դարգադման, հարստացման, իմաստարանական բյուրեղացման այնպիսի ուղի, որն անցնելու համար այլ պայմաններում դարեր կպահանջվեին: Մենք իրավամբ պարծենում ենք սովետահայ լեզվի արդի մակարդակով: Ուստի այս պայմաններում պետք է անթույլատրելի համարվեն ու մերժվեն մեր գեղարվեստական և զիտական զբաղանությունների մեջ երբեմն տեղ գտնող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են բառերի արհեստական կարճացումը, նախդիրների սղումը, դրաբարախոսն ժարգոնի ստեղծումը, լեզվի գոեհեղացումը, վաղուց բնդհանրացած պատմական անվանաձևերի կամայական փոփոխումը, արհեստականորեն թխված տերմինների գործածումը և կամ այլ լեզուներում գործածվող տերմինների՝ առանց թարգմանելու հախուռն կերպով մեր լեզվի մեջ մեխանիկորեն ներմուծումը:

Ըր ելույթում՝ կանգ առնելով լեզվաշինարարության և լեզվի մաքրության հարցերի վրա, ֆիլոսոփական գիտ. թեկնածու ընկ. Ա. Արրահամյանը ասաց. «Ժամանակակից հայ զբաղական լեզվի կազմավորման գործում մեծ դեր են խաղացել սումա ճյուղի բարբառները, հատկապես արարատյան բարբառը: Պետք է նշել, որ միայն արարատյան բարբառի նյութը չէ, որ դրված է արդի հայերենի մեջ: Ժամանակակից հայերեն լեզվի կազմության մեջ օգտագործվել է և այլ բարբառների լեզվական անհրաժեշտ նյութը, բայց ոչ նրանց լեզվական համակարգը, ինչպես նաև դրաբարի լեզվական նյութը: Ահա այդ է պատճառը, որ ժամանակակից հայերենը բարձրացել է թե՛ դրաբարի և թե՛ բարբառներից և դարձել է ճոխ լեզու: Այժմ դրված է հայ լեզվի մաքրության պահպանման հարցը, նրա լեզվաշինարարության հարցը: Պարզ է, որ այս հարցերը շոշափելիս՝ պետք է անդրադառնալ այն խնդրին, թե՛ այդ հարցում ինչպիսի վերաբերմունք պետք է ունենանք մենք բարբառների և դրաբարի նկատմամբ: Չի կարելի ասել, որ դրաբարից և բարբառներից ամեն ինչ վերցված է, բայց նյութերը քամված են և ոչինչ չկա օգտագործելու: Դժվար է ասել, թե՛ երբ կամ ինչ առիթով մենք կարող ենք բարբառից կամ դրաբարից վերցնել այս ու այն բառը, բայց կյանքի պահանջները ցույց են տալիս, որ որոշ բառեր, արտահայտու-

թյուններ ու ոճեր պետք են գալիս: Ահա հենց կյանքի այդ պահանջով էլ մենք կարող ենք զիմել բոլոր բարբառներին և զբարարին, առանձին բառեր, բառաձևեր, զարձվածքներ ու ոճեր օգտագործելու աեսակետից:

Մոտավորապես նույն կարգի մտքեր արտահայտեց նաև բնկ. Վ. Առաքելյանը: Մեր լեզուն, — ասաց նա, — ունի հարստացման մի քանի աղբյուր: Դրանցից առաջինը մեր լեզվի սեփական ձևաբանական միջոցներն են, որոնցով նա անընդհատ նորանոր բառեր է կազմում ու հարստանում: Երկրորդ աղբյուրը փոխառություններն են, որ մենք կատարում ենք եզրայրական ժողովուրդների լեզուներից և առանձնապես ուսումնական մեծ ժողովրդի լեզվից: Այդ հարուստ լեզվից մենք հսկում ենք մեծ ռեպերտուարից առաջ էլ փոխառություններ արել ենք, իսկ հետագայում ավելի շատ պիտի անենք: Այդ փոխառությունները վաղուց արդեն մտել են մեր լեզվի բառային հիմնական ֆոնդը: Սակայն զրա հետ մեկտեղ մենք չենք կարող անտեսել մեր չին զրավոր լեզուն և մեր բարբառները՝ իրեն ժամանակակից հայերենի հարստացման աղբյուրներ: Այս իհարկե չի նշանակում, որ մենք մեր լեզվի դոները լայնորեն բաց կանենք և թույլ կտանք, որ բարբառներն ու զրարարը լցվեն մեր լեզվի մեջ և խախտեն նրա օրինաչափությունները: Թե զրարարը և թե բարբառները միշտ էլ թափանցել են մեր լեզվի մեջ՝ դանդաղ ու աննկատելի, ձուլվել են նրա մեջ՝ առանց զգալ տալու իրենց ներկայությունը, տարիների բնթացքում հարստացնելով այն: Մենք չենք կարող չընդունել այնպիսի բառեր, որոնք կան զրարարում և բարբառներում, բայց սրտեք մեր լեզուն չունի: Այդպես են օրինակ մի շարք շինարարական, տեխնիկական, գյուղատնտեսական բառեր, բույսերի, թռչունների և կենդանիների անուններ, բժշկական բառեր ու տերմիններ, աստղաբաշխական, աշխարհագրական, սաղմական և այլ տերմիններ ու բառեր, սրտեք անշուշտ պետք է մտնեն համապատասխան մասնագիտական դասընթացների մեջ և պատճառ մասնագիտական բառեր: Բարբառները, մանավանդ բարբառային զարձվածքները իրենց մեջ տանեն այնպիսի գանձեր, որոնք եթե մենք անտես անենք, զրանով կմնասենք մեր ազգային լեզվի զարգացման ու հարստացման գործին, մանավանդ նրա ճկունությունը:

Պոսելով ժամանակակից հայերենի զարգացման հեռանկարների և լեզվաշինարարության հերթական խնդիրների մասին, բնկ. Բ. Առաքելյանը ասաց. տարակարծություն չկա այն բանի վերաբերյալ, որ նոր բառերի ստեղծումը պետք է կատարել հայոց լեզվի բառապաշարի և նրա քերականական օրինաչափության հիման վրա: Անշուշտ պետք է շարունակել նաև փոխառություններ կատարելը, հատկապես ուսումնական լեզվի միջոցով և ըստ նորավորին՝ ուսուցիչների ձեռով, եթե դա չի խախտում հայերենի օրինաչափությունը: Մեր զրուցներից ու գիտնականներից ամեն մեկը պետք է մտածի մեր լեզվի հարուստ բառապաշարը բազմակողմանիորեն օգտագործելու և նրա հետագա զարգացման մասին: Դժբախտաբար երբեմն զեզարվեստական ստեղծագործությունների մեջ այնքան շատ է օգտագործվում այս կամ այն բարբառ, որ երկր զրանից միայն տուժում է: Այդ բանը կարելի է տեսլ, օրինակ Պ. Դաշտենցի և Միրասի զրվածքների մասին: Լեզվի մաքրությունը — ասում է բնկ. Առաքելյանը, — կապված է նաև ոճի մաքրության հետ: Ոճի մաքրության փայլուն օրինակներ են տալիս մարք-

սիզմի կլասիկները, Լենկեր Ստալինը ամենարարդ ու ամենազավար գիտական ու քաղաքական հարցերը շարադրում է կլասիկ հստակությամբ ու պարզությամբ, մեղանից ամեն մեկը պարտավոր է ձգտել հասնելու մտքի առավել հստակության, իսկ այդ հնարավոր է միայն այն դեպքում, երբ մենք տիրապետենք մարքսիզմ-լենինիզմի տեսական մեթոդոլոգիական հարստությանը, տիրապետենք մեր շարադրած նյութին, տեսնենք հարցի բազմակողմանի կապակցությունները, անջատենք զլխավորը երկրորդականից, Մեզ համար օրինակ պետք է ծառայի մարքսիզմի կլասիկների ոճը, մեզ համար պարտադիր է մարքսիզմի կլասիկներին ուսումնասիրելը և մեզ հետաքրքրող գիտական բնագավառին կատարելապես տիրապետելը, որպեսզի մաքուր, հստակ ոճով կարողանանք շարադրել մեր մտքերը:

Լեզվաշինարարությունը և լեզվի մաքրության հարցերի կապակցությամբ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ջահուկյանը առաջ քաշեց գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող տերմինաբանական, բացատրական և մասնագիտական բառարաններ կազմելու և հրատարակելու հարցը: Այդ կարգի բառարաններ առանձնապես անհրաժեշտ են լեզվի ուսուցման, ինչպես նաև առանձին գիտությունների մասնագիտական տերմինների ասպարեզում միասնականություն մտցնելու տեսակետից: Միաժամանակ ընկ. Ջահուկյանը մատնանշեց, որ տերմինների զործածություն ասպարեզում կամայականությունից խուսափելու համար անհրաժեշտ է աշխուժացնել Տերմինաբանական կոմիտեի աշխատանքը:

Ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հասունացած խընդիրների և հայոց լեզվի մաքրության ու անագարտության հարցը, որ գիտությունների հիմնական առանցքն էր կազմում, հատուկ հետաքրքրություն առաջացրեց և բնական է, որ նրա շուրջը ծավալվեց մտքերի լայն փոխանակում: Նշելով տյոգ հարցի բացառիկ կարևորությունը և մեծ մասամբ համաձայնվելով գեկուլցող պրոֆ. Ղափանցյանի առաջադրած լեզվաշինարարական գրույթների ու առաջարկների հետ, բոլոր ելույթ ունեցողներն ընդդժում էին, որ անհրաժեշտ է լեզվաբանության հարցերի վերաբերյալ ընկեր Ստալինի աշխատությունների լույսով հետևողական պայքար մղել հայոց գրական լեզվի մաքրության համար, պայքարել մեր լեզվին խորթ ու այն աղավաղող «նորամուծությունների» փոխառությունների դեմ, ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում վերացվեն այն շփոթն ու աղճատումները, որ մտցրել էին հայերենի մեջ մառականները: Միաժամանակ ելույթ ունեցողների մեծ մասը նշեց ալն բարերար ազդեցությունը, որ ունեցել է և ունի ողոս մեծ ժողովրդի լեզուն՝ հայերենի հետագա զարգացման, հարստացման ու ճկունացման գործում:

Այս տեսակետից իբրև գիտնանս նշեց պրոֆ. Գ. Սևիակի ելույթը: Առարկելով պրոֆ. Ղափանցյանի՝ հայերենի լեզվաշինարարության և նրա մաքրության վերաբերյալ հիմնականում ճիշտ ու առողջ գրույթների դեմ, պրոֆ. Սևիակը գտնում է, որ փոխառումների և լեզվաշինարարության հարցում գեկուլցողի արած առաջարկները իբր թե հակասում են հայ գրական լեզվի առանձնահատկություններին և աղավաղում են այն, որ դրանք բոս էություն իբր թե հայոց լեզվի ոեֆորմի պահանջ են առաջադրում:

Անուղղակի ձևով պրոֆ. Սեփակը փաստորեն տարելու է սուսերենից և այլ լեզուներից կատարվող փոխառությունների դեմ: Վերջին հարցի կապակցությամբ ճիշտ դիրքավորում չցուցարեերեց նաև պրոֆ. է. Աղայանը: Պրոֆ. Գ. Սեփակի և պրոֆ. է. Աղայանի այդ անճիշտ տեսակետների խիստ քննադատությամբ հանդես եկան մի շարք բնիկներ (Մ. Բսրայեյան, Ա. Գրիգորյան, Հ. Սանտաձև, Վ. Սևանյան և ուրիշներ): Իր ելույթում բնիկ Հ. Սանտաձևն ասաց, «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի սեկտորը, որի գեկավարն է պրոֆ. Սեփակը, մինչև ընկեր Ստալինի լեզվաբանական հանձարեղ աշխատությունների հրապարակումը կանոնադրված էր մասական ուղղությամբ վրա և արդի հայերենի լեզվաշինարարությամբ մի շարք հարցեր սխալ էր լուծում: Ընկ. Սեփակը իր աշխատություններում և հատկապես Տերմինաբանական Կոմիտեն ներկայացրած նախագծերում խառնաշփոթությամբ է ստեղծել հայոց լեզվի ուղղագրությամբ և ուղղախոսությամբ մի շարք հարցերում: Ընկ. Սեփակը իր ելույթում մեղադրում է պրոֆ. Ղափանցյանին, որ նա հարադատ չի մնում հայոց լեզվի օրենքներին, հաշվի չի տնոում արդի հայերենի դարդացման ներքին օրինաչափությունները և տոանձնահատկությունները, սակայն իրականում ամենից շատ պրոֆ. Սեփակը ինքն է շեղվում այդ օրենքներից: Ընկ. Սեփակը իր գործունեությամբ միշտ ձգտել է «բարեփոխել» հայոց լեզուն, բայց այդ «բարեփոխությամբ» նա մեր լեզուն միայն մոտեցրել է բարբառային արտասանությանը և ձգտել է հեռացնել ռուսական կուլտուրայի բարերար ազդեցությունից: Տերմինաբանական Կոմիտեն իր գործունեությամբ բնթացքում իհարկե որոշ դրական գործ կատարել է, սակայն մի շարք հարցերում հայոց լեզվի ուղղագրությունը և ուղղախոսությունը կանոնավորելու փոխարեն, փաստորեն ազավաղել ու խեղաթյուրել է այն:

Բխկոսխայի նպատակն այն է, — ասաց իր ելույթում բնիկ Վ. Սևանյանը, — որ մենք ճիշտ կողմնորոշում ստանանք հայոց լեզվի հետադարդացման հեռանկարների վերաբերյալ: Սակայն որոշ լեզվաբանների ելույթները միայն խճողում են ասանց այն էլ բարդ ու դժվարին այդ հարցը: Լեզվաշինարարության խնդիրները պետք է բխեն լեզվի գերից ու նշանակությունից: Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ լեզուն ամենից առաջ մարդկանց հաղորդակցության միջոց է: Հասկանալի է, որ մեր էպոխայում լեզուն պետք է դառնա նաև սոցիալիստական ազդերի ամենասերտ հաղորդակցության միջոց: «Տարբեր լեզվով խոսող մարդիկ, — ասում էր Գորկին, — վատ չեն հասկանում միմյանց, որովհետև կան բառեր, որոնք բոլոր լեզուներում միատեսակ են հնչում. այդ բառերն են — Լենին, Ստալին, սովետներ»: Հակառակ սրան՝ որոշ մարդիկ լեզուն դիտում են որպես ազդային սահմանավակույթյան միջոց, ազդային սնապարծույթյան տարակա: Բոլոր լեզուներն էլ հնարավորություն ունեն թարգմանել այնպիսի մի բառ, ինչպիսին է, օրինակ, սովետ բառը, քանի որ բոլոր լեզուներում էլ գոյություն ունեն «խորհուրդ» և «խորհրդակցել» հասկացողությունները: Բայց եթե «թարգմանությամբ» սկզբունքի ասպետները հետևողական լինեն, տալա նրանք պետք է առաջարկեն թարգմանել նաև բոլշևիկ, պատլամենտ, լեյբորիստ, կապիտալիստ և այլ նման բառերը: Ճիշտ է, անցյալում փորձեր եղել են բոլշևիկը թարգմանել մեծամասնական, մենշևիկը՝

փոքրամասնական և այլն, բայց ժողովուրդը չընդունեց այդ բառերը և նրանք մնացին միայն իրենց ստեղծողների սեփականությունը: Մմանք այդ կարգի բառերը թարգմանելու իրենց ցանկությունը պատճառաբանում են այն բանով, որ իբր թե տվյալ տերմինը, ասենք տելեվիզոր բառը, հասկանալի չէ առանց բացատրություն, բայց պարզ է, որ այդ բառին փոխարինող մեկ ուրիշ բառ, որ մեծ մասամբ կարող է արհեստականորեն ստեղծված լինել, նույնպես անհասկանալի կլինի՝ առանց բացատրության կամ ցուցադրության: Խնչո՞ւ պետք է վախենալ հատկապես գիտական ու տեխնիկական տերմինների փոխառություններից: Մի՞թե նրանք սպառնում են մեր լեզվին: Իհարկե, ոչ: Սովետ, ռադիո, ռեուլուզիա, սեսիա և այլ բառերը, որ մեր լեզվի մեջ են մտել՝ ռուսերենի միջոցով, ոչ միայն ոչ մի սպառնալիք չեն ներկայացնում մեր լեզվի անաղարտությունը կամ նրա զարգացմանը, այլ, ընդհակառակը, հարստացնում ու ճկունացնում են այն: Լեզվի «մաքրություն» ջանասեր պաշտպանները, որոնցից են ընկ. Սևվակն ու է. Աղայանը, ավելի լավ կաննին, եթե իրենց աշխատություններում չփորձեն փշրել մեր լեզվի քերականական կառուցվածքը, չխանգարեն նրա բառապաշարի մեծացմանը, փորձեր չանեն մեր լեզուն դարձնելու ջերմոցային լեզու: Եո կարծում եմ, որ սխալ չի լինի, եթե մեր լեզուն էլ զտնվի այնպիսի լեզուների շարքում, որոնք համարձակ կերպով ընդունում են միջադպյին դարձած բառերն ու տերմինները: Այդ լեզուների թվին է պատկանում մեծահարուստ ռուսաց լեզուն, ինչպես նաև այնպիսի զարգացած լեզուներ՝ ինչպիսիք են անգլերենը, գերմաներենը, ֆրանսերենը: Այս կարգի փոխառություններից վախենալը, իմ կարծիքով, աղղային սահմանափակություն և աղղային սնապարծություն ունեցիդիվ է, քանի որ այնպիսի փոխառումները ոչ միայն չեն փոխում լեզվի քերականական կառուցվածքը և չեն փլուզում նրա բառարանային հիմնական ֆոնդին, այլ, ընդհակառակը, հարստացնում են լեզուն, դարձնում այն ճկուն և մոտեցրնում մյուս լեզուներին, և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի լեզվին: Ռուսերենից կամ նրա միջոցով մեր լեզվին անցած հարյուրավոր բառեր ու տերմիններ այն աստիճան մերվել ու յուրացվել են հայերենի մեջ, որ նրա համար դարձել են նույնքան հարադատ, որքան և իր սեփական բառամթերքը, և իդուր է ընկ. Սևվակը սուր ճոճում այնպիսի օրինական և ընդհանուր ընդունելություն արժանացած բառերի դեմ, ինչպիսիք են սովետը կամ կոնստիտուցիան: Իդուր է ընկ. Աղայանը կարծում, որ եթե «կոմունիստ» բառը գրվի երկու մ-ով, ապա դրանից հայոց լեզուն կտուժի: Իսկ ինչու «կեցցե»-ի երկրորդ գ-ն չի վախեցնում ընկ. Աղայանին, ինչու է նա կարծում, որ այդ երկրորդ մ-ն սպառնում է հայոց լեզվին՝ ասիմիլացիայով կամ աղքատացմամբ:

Մեր լեզուն աղքատացնելու վտանգը, նրա հնարավորությունները սահմանափակելու վտանգը հանդես է դալիս այն ժամանակ, երբ որոշ մարդիկ փորձում են կաղապարի մեջ դնել մեր լեզուն և չընդունել ոչ որեւէ նոր ձև, ոչ էլ որեւէ «օտարածին» բառ ու տերմին: Այդ կոնսերվատիզմը բավական պարզ արտահայտվեց ընկ. Սևվակի և Աղայանի ելույթներում: Մեր լեզվի հետագա զարգացման շահերը պահանջում են պայքարել այդ կոնսերվատիզմի դեմ: